ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՊԱՐՍԿԵՐԵՆ

Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման նպատակով ուսուցիչների քննության թեստի

## ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ - 2024

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........................................................................................................ 3

1. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ........................................................................................................ 4

2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ.................................................. 5

3. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ................................................ 7

4. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ՆՄՈՒՇ .................................................. 9

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուղեցույցը նախատեսված է «Պարսկերեն» առարկան դասավանդող ուսուցիչների սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման քննության համար: Ուղեցույցի նպատակն է օգնել ուսուցչին նախապատրաստվելու ատեստավորմանը:

Ուղեցույցում ներկայացվում են ուսուցչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակի նկարագրությունը, պատասխանների գնահատման չափանիշները, պատասխանների ձևաթղթի լրացման կարգը և թեստային առաջադրանքներում ընդգրկված նյութը:

Թեստի առաջադրանքների համար հիմք են հանդիսացել պարսկերենի դասավանդման դպրոցական դասագրքերը:

# 1. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**«Պարսկերեն»** առարկայի *ուսուցիչների ատեստավորման* թեստը գնահատվում է 60 միավոր, որից 40 միավորը նախատեսված է ընտրովի պատասխանով առաջադրանքների և 20 միավորը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար:

Ատեստավորման թեստում 1-40-րդ առաջադրանքները ընտրովի պատասխանով են, իսկ 41-60-րդը՝ կարճ պատասխանով:

Ուսուցիչների ատեստավորման թեստն ընդգրկում է պարսկերենի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները:

Ուսուցիչների ատեստավորման թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

## 2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

### 1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ:

Հարցի համար տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Անհրաժեշտ է ընտրել միակ ճիշտ պատասխանը: Առաջադրանքը համարվում է կատարված և տրվում է 1 միավոր, եթե ուսուցչի ընտրած պատասխանը համընկնում է ճիշտ պատասխանի հետ:

**Գնահատման չափանիշը:** Թեստի 1-40-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

**Ձևաթղթի լրացման կարգը:** Ձևաթղթում 1-40-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի համար ներքևում տրված է 4 վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո պետք է տվյալ պատասխանի համարին համապատախանող վանդակում դնել «X» նշանը (տե՛ս նկ. 1):




Նկար 1

### 2. Կարճ պատասխանով առաջադրանքներ:

Տրվում է որևէ հարց, որի պատասխանը մեկ թիվ կամ մի քանի թվեր են, պետք է գրել ինքնուրույն: Այս առաջադրանքին պատասխանելիս հարկավոր է գրել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ պատասխանների համարները, նախատեսված հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ նիշ (Տե՛ս նկ. 2): *Թվային հաջորդականությունը կարևոր է:*




Նկար 2

**Գնահատման չափանիշը:** Թեստի 41-60-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

**Ձևաթղթի լրացման կարգը:** Ձևաթղթում 41-60-րդ առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ ձևաթղթում նախատեսված հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվային նիշ:

**Ձևաթղթում պատասխանների ուղղման կարգը:** Պատասխանների ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու չորս հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար և 2-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար:

Եթե անհրաժեշտ է փոխել ընտրովի պատասխանով առաջադրանքի սխալ նշված պատասխանը, ապա նախատեսված դաշտի հորիզոնական վանդակում պետք է գրել առաջադրանքի համարը, իսկ դրանից ներքև ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը:

Կարճ պատասխանով առաջադրանքների սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում հորիզոնական երկու վանդակներում գրվում է առաջադրանքի համարը, որից հետո վանդակներում լրացվում է պատասխանը:

Եթե առաջադրանքի համարը միանիշ թիվ է, ապա առաջին վանդակում ոչինչ չի նշվում և գրառումը սկսվում է երկրորդ վանդակից:

## 3. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Պարսկերեն» առարկայի ուսուցչի ատեստավորման թեստի առաջադրանքների ընտրությունը կատարվում է համաձայն հանրակրթական դպրոցի «Պարսկերեն» առարկայի ուսումնական ծրագրերի: Թեստում ընդգրկված են դպրոցական ծրագրի գրեթե բոլոր թեմաները՝

**բառագիտություն**

1. իմաստաբանություն

հոմանիշներ և հականիշներ

**ձևաբանություն**

1. գոյական

գոյականի թիվը

արաբական հոգնակին պարսկերենում

իզաֆեթը պարսկերենում

որոշյալ և անորոշ առումներ

2. ածական

որակական և հարաբերական ածականներ

ածականի համեմատության աստիճանները

3. թվական

քանակական թվական

դասական թվական

դասանիշները թվականների հետ

4.դերանուն

անձնական, կցական անձնական դերանուն

ցուցական

հարցական

փոխադարձ

որոշյալ

անորոշ

անդրադարձ-սաստկական

ժխտական

5. բայ

դերբայները պարսկերենում

անցյալի և ներկայի բայահիմքեր

օժանդակ բայ

եղանակ, ժամանակ, դեմք, թիվ

սահմանական եղանակ

հրամայական եղանակ

պայմանական-ստորադասական եղանակ

բայի սեռ

6. մակբայ

7. նախդիրներ

**Շարահյուսություն**

պարզ նախադասություն

բարդ նախադասություն

պատմողական նախադասություն

հարցական նախադասություն

հրամայական նախադասություն

բացականչական նախադասություն

2024թ. Ուսուցչի առարկայական գիտելիքի ստուգում

# Պատասխանների ձևաթուղթ
## Պարսկերեն

ազգանուն

անուն հայրանուն

ԳԹԿ անձնական համար

28

Թեստ № 1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐

### Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| a | | | | | | | | | | | | | | | | | | | | | a |
| b | | | | | | | | | | | | | | | | | | | | | b |
| c | | | | | | | | | | | | | | | | | | | | | c |
| d | | | | | | | | | | | | | | | | | | | | | d |

| | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| a | | | | | | | | | | | | | | | | | | | | | a |
| b | | | | | | | | | | | | | | | | | | | | | b |
| c | | | | | | | | | | | | | | | | | | | | | c |
| d | | | | | | | | | | | | | | | | | | | | | d |

### Կարճ պատասխանով առաջադրանքներ

| | | | |
|---|---|---|---|
| 41 | 46 | 51 | 56 |
| 42 | 47 | 52 | 57 |
| 43 | 48 | 53 | 58 |
| 44 | 49 | 54 | 59 |
| 45 | 50 | 55 | 60 |

Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի

1
2
3
4

Կարճ

Արտագրեք այս նախադասությունը՝ Ծանոթ եմ ուսուցչի առարկայական գիտելիքի ստուգման աշխատակարգին: